

649

81

# ՀՐԵՎԱՐԴ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՅԱՐ



491.99-8

Խ-96

ԿԱԶՄԱՔԻ

ՀՀԱՅՐԱԿԱՆ ԼԻԳՐՈՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ —

1005-10

431.99-8

Խ-96

Հաստագուծ ե

ՀԽՍՀ 1 ուսավորության մօղավորական կոմիտարիանի կողմից

Լ. ԽՈԽԴՅԱՆ ՅԵՎ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԿՈՎՈՒ  
100/1194




431.99-8  
649

4693

ԱԿՈՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ - 1987

14 MAY 2013

8062




ՎՐԱԴՐՈՒՄ ԽԵՂԻՉԵՆԻ



3704-91



ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱՏԱԼԻՆԸ



Ընկեր Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ  
ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի  
նախագահ

## 1. ԶՄԵՐ

Զմեռ ե:  
Արեգակը յ՝ ըկնքում քիչ ե յերեսում:  
Արերը կարճ են, գիշերները՝ յերկար:  
Գետինը ծածկված ե ձյունով, գետերն ու  
լճերը՝ սառույցով: Ծառերն ու թփերը մերկ են:  
Ծատ թռչուններ տաք յերկրներ են գնացել:  
Մեզ մոտ մնացել են կաչաղակը, ազուավը, ձընձ-  
դուկը:

Կոլտնտեսականները ձմռանը զտում են սեր-  
մերը, նորոգում գյուղատնտեսական գործիքները:

Յերեխանները չեն վախենում ցրտից: Նրանք  
տաք շորեր են հագնում, դուրս գալիս տնից սրղ-  
դում, սահում, ձնագնդի լսաղում, ձնե մարդ շի-  
նում:

## 2. ՄՅՖՈՒՐ ՈԴՈՒՄ

Սպիտակ, փափուկ ձյուն ե յեկել,  
պատել փողոց ու դաշտեր:  
Յեկեք, յեկեք, ջան մանուկներ,  
խաղանք ձմռան մեր խաղեր:

Ոդը մաքուր, սառն ու պայծառ,  
յեկեք վազենք ու խաղանք,  
վաղուց ե վոր մենք չենք տեսել  
այսպես սիրուն յեղանակ:

1

Չմեռ եր:

Արամը դաշտից գյուղ եր վերադառնում: Ճանապարհին ուժեղ քամի բարձրացավ: Արամը ճանապարհը կորցրեց: Դես ընկավ, զեն ընկավ, հոգնեց ու ուժասպառ վայր ընկավ:

Չյունը ծածկեց նրան:

2

Մի վորսորդ վորսի յեր գնում: Նրա հետևից վաղում եր շունը:

Շունը հանկարծ կանգ առավ, գունչը ձյունին քսեց, հոտոտեց և սկսեց թաթերով փորել: Վորսորդը մոտեցավ ու տեսավ, վոր ձյան միջից գոլորշի յե բարձրանում, նա յել սկսեց փորել և ձյան միջից Արամին հանեց:

Վորսորդը ձյունով տրորեց նրա մարմինը Արամն ուշքի յեկավ, բայց շատ թույլ եր: Վորսորդի ոգնությամբ Արամը կամաց-կամաց գնաց տուն:



Խաղ անելով մաքուր ողում  
ուժ, յեռանդ ենք հավաքում,  
Խորհուրդների յերկրի համար  
աշխատանքի պատրաստվում:



4. ԱՇԿՐԻԿԻ ՎԵՐԳԱԿԵԿՐ  
ԱՇԿՐԻԿԻ ՆԱԳԻԵԿ ԴԱՄԲ ԱՊՀՈ-  
ՐԵԼՈՒ:

ՄԵԿ ԵԼ ՏԱՄՐԸ ՆԿԱԿԻԵԿ, ՎՈՐ  
ՆԱ ԳԼՈՒԽԻՐ ԴՐԵԼ Ե ԱԵՂԱՆԻՆ և  
ՆՆԴՈՆ Մ Ե:

-ԱՇԿՐԻԿ ԶԱՆ, ԻՆՉՈՆ ԴԱՄԲ  
ԵԿ ԱՊՎՈՐՆԵ-ՀԱՐՄՐԵԿ ՏԱՄՐ:  
-ՎԵՐԳԱԿԵԿԻ յԵՄ հԱՍԵԼ ՏԱՄ-  
ՐԻԿ, -ԱԿԱԿԱՍԻԱՆԵԿ ԱՇԿՐԻԿԻ-  
-ուսուցիչն ասաց -յԵՐՔ ՎԵՐ-  
ԳԱԿԵԿԻ հԱՍՆԵԱ, հԱՆԳԱԿԱԿԻՐ

ԻՄ ՀԱՅՐԸ ՉՈՓԵՐ ԵՐ:  
ՆԱ ԼԵՆԻՆԻՆ ԱՎՄՈՋՈՔԻԼՈՎ ՄԱՆ ԵՐ ԱՃՈՎՄԵ-  
ՄԻ ՈՐ ՀՈՐՍ ԽՆԴՐԵՑԻ, ՎՈՐ ԻՆԸ ԵԼ ՄԱՆ ԱՃԻ:  
— ԶԻ ԿԱՐԵԼԻ, ՉՈւԹՈՎ ԼԵՆԻՆԸ ՊԱՐՈՒ յԵ,-  
ԱՎԱՏԱՍԻԹԱՆԵց ՀԱՅՐԱ:

ՔԻՉ ՀԵՏՈ ԼԵՆԻՆԸ ՊՈՒՐՍ յԵԿԱՎ և ուզեց աՎՄՈ-  
ՋՈՔԻԼ ՆՍԹԵՐ:

ԻՆԸ ՆԿԱԿԵց ու ՀԱՐՋՐԵց.  
— Ո՞ւմ աղան եա:  
— Ի՞նն ե, — ԱՎԱՏԱՍԻԹԱՆԵց ՀԱՅՐԱ:  
— ԱՆՈՒՆԴ ԲԻՆ ե:  
— ՊԵՏՋԱ:  
— ԴԵ, ՆՍԹԻՐ, ՊԵՏՋԱ, ԱՎՄՈՋՈՔԻԼՈՎ ՄԱՆ  
ՊԱՆՔ:

Ս.ՎՄՈՋՈՔԻՐ ՍՐԱՋԹԺ:  
ՅԵՐՔ ՀՐԱՎԱՐՄԿ ՀԱՍԱՆՔ, ԼԵՆԻՆՆ ԲՆԸ ԻՉԵց-  
ՐԵց ու ասաց:  
— ՆՈՒ, ՊԵՏՋԱ, ՎԱԳԻՐ ՄՈՒՆ:  
ՅԵՍ ՎԱԳԵցի ՄՈՒՆ Ու ՄԱՐԺԻԿԻՄ ԱՍԱԳԻ:  
— ՄԱՅՐԻԿ, յԵՍ ԼԵՆԻՆԻ հԵՏ ԱՎՄՈՋՈՔԻԼՈՎ  
ՄԱՆ յԵԿԱ:  
ՀԵՏՈ յԵԼ ԱՎԱՄԵցի ըՆԿԵՐՆԵՐԻԱ:

## 6. ԸՆԿԵՐ ԱՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Հիշում եմ Գորու ծխական դպրոցում սովորելու տարիները:

Իսուիֆ Զուղաշվիլին նիհար, բայց ամբակազմ տղա յեր կենառախ ու ընկերասեր—նա միշտ շրջապատված եր լինում ընկերներով: Նա առանձնապես սիրում եր իր հասակակիցների հետ գնդակ և «լախտի» խաղալ: Դրանք աշակերտների սիրած խաղերն եյին. Իսուիֆը կարողանում եր ընտրել լավագույն խաղացողներին և այդ պատճառով ել մեր խումբը միշտ տանում եր խաղը:

Իսուիֆը սովորեց հիանալի նկարել, թեև այն տարիներին դպրոցում մեզ նկարչություն չեյին սովորեցնում:

Իսուիֆը շատ զրքեր եր կարդում և կարդացածի մասին պատմում եր մեզ:

Իսուիֆ Զուղաշվիլին աչքի յեր ընկնում իր համեստությամբ և լավ, զգայուն ընկեր եր: Նա չեր գոռողանում այն բանով, վոր մեզանից ավելի ընդունակ եր, այլ ընդհակառակը, իր գիտելիքներով ոգնում եր մեզ, ոգնում եր մեզ նկարել աշխարհագրական քարտեզներ, լուծել խնդիրներ, պատրաստել դասերը:

Այսալինը մեզ ուրախ,  
յերզանիկ կյանք դրվեց

## 7. ԸՆԿԵՐ ԱՏԱԼԻՆԸ ՑԵՎ ՍԱՄՎԱԳՅԱՐԸ

— Իմ թանկագին ընկեր պիոներներ և հոկտեմբերիկներ:

Յես ծաջրկստանի մանուկներից ձեզ վողջույն եմ բերել:

Յես յեկել եմ Մոսկվա, մեր սիրելի Ստալինի մոտ:

Յես տասղերկու տարեկան եմ, սովորում եմ դպրոցում:

Վորքան յերջանիկ եմ, վոր տեսա ընկեր Ստալինին, խոսեցի նրա հետ:

Ինձ հետ բարեելիս, ընկեր Ստալինը ժպտաց և ասաց.

— Մամլաքյաթ, ինչպես ես սովորում:


Յես պատասխանեցի.

— Սովորում եմ գերազանց:


Յերբ իմացավ, վոր լավ եմ սովորում, Ստալինը նորից ժպտաց:



ԵՐ ԺԱՂԱՔՆԵՐԸ



ՄԱՍԿԱՎ, ԽՍՀՄ-ի մայրաքաղաքը



ՅԵՐԵՎԱՆ, Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքը



ԹԲԻԼԻՍԻ, Խորհրդային Վրաստանի մայրաքաղաքը

ԵՐ ԺԱՂԱՔՆԵՐԸ




ԲԱՔՈՒ, Խորհրդային Ադրբեյջանի մայրաքաղաքը



ԿԻՅԵՎ, Խորհրդային Ուկրաինայի մայրաքաղաքը



ՄԻՆԵ, Խորհրդային Բէլգրանիայի մայրաքաղաքը



ԸՆԿԵՐ ԼԱՎՐԵՆՏԻՅ ԲԵՐԻԱ  
Անդրկովկասի բոլշևիկների ղեկավար

## 8. ԱՆԳՐԿՈՎԿԵՍ

Ի՞նչ հրաշալի յե մեր Անդրկովկասր, այն յերկիրը, ուր գտնվում են յեղբայրական Վրաստանը,  
Ազրբեջանը և Հայաստանը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աճել  
ու պայծառացել ե մեր Անդրկովկասր:

Ինչեր ասես, վոր չեա մեր Անդրկովկասում:

Գեղեցիկ Վրաստանը տալիս ե մարզանեց,  
թեյ, մանդարին, նարինջ, լիմոն: Խորհրդային յերկ-  
րի բոլոր յերեխաները սիրում են Վրաստանի  
անուշ մանդարինները:

Ազրբեջանի նավթով աշխատում են Խորհրդ-  
դային Միության շատ գործարաններ, յերկաթու-  
ղիներ, շոգենավեր: Նավթից պատրաստում են  
բենզին: Բենզինով աշխատում են մեր անհամար  
աերոպլանները, ավտոմոբիլները, տրակտորները,  
կոմբայնները:

Հայաստանը տալիս ե պղինձ, համեղ խաղող,  
զեղձ, ծիրան և ուրիշ մրգեր: Խաղողից պատրաս-  
տում են գինիներ և կոնյակներ:

Մեզ մոտ աճում են բամբակ, ծխախոտ, ճակլն-  
դեղ:

Հրաշալի յերկիր ե մեր Անդրկովկասր: Մենք  
ունենք շատ ելեկտրոկայաններ, նրանք լույս  
են տալիս մեր քաղաքներին, գյուղերին և աշխա-  
տեցնում են գործարանները: Յերեխաների համար  
կառուցվել են շատ նոր գեղեցիկ դպրոցներ:

Այս բոլորն Անդրկովկասի բանվորներն ու կոլ-

տնտեսականները ձեռք են բերել մեր սիրելի կով-  
րենափիյ Բերիայի ղեկավարությամբ:

Բանվորներն ու կոլտնտեսականներն ապրում  
են ունեուր կյանքով — ուրախ և յերջանիկ:

Այդ յերջանիկ և ուրախ կյանքը ավել և մեր  
սիրելի ՍՏԱԼԻՆԸ:

Շնորհակալություն ՍՏԱԼԻՆԻՆ աւրախ աշխր-  
ջանիկ կյանքի համար:



## 9. ՎԱՍԿԻ ԶԿՆԻԿ

(Հեքիաթ)

Մի ծերուկ ձկնորս և իր պառագ կին  
բընակում եին մեծ ծովի ափին,  
ծերը գնում էր ձուկ բոնում ծովից,  
պառագն ել տանը թել մանում բրդից.  
այսպես միասին՝ մի հին գետնատան,  
յերեսուն յերեք տարի ապրեցան:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ՊՈՒՇԿԻՆ


Ահա մեկ որ ել ծերը գնաց ծով,  
փոր ձուկը փորսա իր մաշված ցանցով.  
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,  
տռաջին անգամ միայն տիզմ հանեց:  
Յերկրորդ անգամը դանցը ձգեց ծով,  
ցանցը դուրս յեկավ ծովային խոտով:

Իսկ յերրորդ անգամ փոր ցանցը ձգեց,  
ո՞վ կարի ասել, թե ինչ դուրս հանեց.  
Նա բերավ իր հետ մի փոսկե ձկնիկ՝  
ծերի ցանցն ընկալ. իբրև խեղճ գերի,  
ձկան արքայի դուստրը գեղեցիկ  
փոսկի աղջիկը ձուկ-թագավորի:

Խեղճ փոսկի ձկնիկ, ինչպես ե խնդրում,  
մարդկային լեզվով ծերին աղաչում.  
«Թնդ ինձ, ծերուկ, թնդ ինձ անվտանգ,  
քեզ կվճարեմ թանկազին փրկանք,  
ինչ սիր «ըդ ուզի. ինչ փոր կամենաս  
ուղիղն եմ ասում, իսձնից կստանաս»:

Կախեցավ ծերը, մնաց զարմացած.  
Նա այնքան տարի ձկնորս եր յեղած,  
բայց ձկան մասին յերբեք չեր լսել,  
թէ նա մարդու պես կարող ե խոսել:

«Քնա, տեր ընդ քեզ, ասեց ծերունին,  
ինձ հարկավոր չե փրկանք թանկազին.  
Գնա բեղ համար զու ծիրանի ծով,  
ու այնտեղ ապրի աղատ, ապահով:




ԸՆԿԵՐ Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

Համկոմկուսի Կենտկոմի քարտուղար և հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսար

## 10. ՊԻՌԱՆԵՐ ՊԵՏԻԿԸ

1

Պիոներ Պետիկը սլաքավարի վորդի յեր  
Գալնան սկզբին մի որ, յերբ Պետիկը դպւո-



ցից յեկավ, ճաշեց ու գասերը սովորեց, մայրիկն  
ասաց.

— Պետիկ, մի քիչ հաց տար հայրիկիդ հա-  
մար,

Քիչ հետո Պետիկը քայլում եր անտառի մի-  
ջով, յերկաթզծի կողքով:

Մառերը ծաղկել եւին. Փչում եր մեղմ զեփյուռ. Փոքիկ թռչունները թփերի մեջ ծագում եցին.

Հայրիկի տնակը հեռու չեր. Պետիկը չորս կիլոմետր ճանապարհ պիտի կտրեր.

Պայծառ յեղանակ եր. Բայց շուտով յերկինքը ծածկվեց ամպերով, վորոտաց, կայծակի շանթեր յերևացին, հորդ անձրե թափեց. Պետիկը մտավ մի մեծ ծառի տակ և սպասում եր, վոր անձրեը զաղարի. Բայց անձրեը քանի զնում, հորդանում եր:

3

Հանկարծ դիմացի սարից մեծ-մեծ քարեր պոկվեցին, դղրդալով ցած դղորվեցին և ընկան յերկաթգծերի վրա.

Ճանապարհը փակվեց.

Այդ ժամանակ շոգեմեքենայի սուլոց լովեց:

— Մարդաբարն ե... Ի՞նչ կլինի, ի՞նչ կլնի... Բունրը, բոլորը կը եռնեն, անցավ Պետիկի մտքով.

Անձրեն ագելի հորդացավ. շոգեմեքենայի սուլոցն աչելի քոտիկից լովեց:

Պետիկը փողկապր հանեց, ծառից մի ճյուղ պոկեց, փողկապր կապեց ճողովի ծայրին, բարձր բռնեց և սկսեց առաջ գաղել, գոռալով.

— Մեքենավար, մեքենավար, ճանապարհը փակ ե...

Հենց թափված քարերի մոտ զնացը կանդ տուավ:

Ճամփորդների կյանքը փրկված եր:

## 11. ԿԿՎԱՆ

Հեսու հյուսիսում ե ապրում վոքրիկ իկիան — եսկիսոս տղան:

Նա զարթնեց ձյունե տանը:

Տան մեջտեղին, մի ամանի մեջ վառվում եր ճարպը:

Կրակը լուսավորում եր ու տաքացնում:

Իկիան դուրս յեկավ արջի մորթուց, վորի մեջ քնած եր. Նա հագավ մորթե շորերը:

Շունն ել զարթնեց և իկիայի մոտ վաղեց:

Նրանք տնից դուրս յեկան:


Դուրսը մութն եր ու ցուրտ:


Զմռանն այստեղ մի քանի ամիս շարունակ արեց դուրս չի գալիս, իսկ ամռանը՝ մի քանի ամիս մայր չի մանում:

Այստեղ ծառեր չկան:

— Սրի, կերակուրը պատրաստ ե, — ձայն տվեց մայրը:

Իկիան, նախաճաշելուց հետո, զրքերը վերցրեց և ուրիշ աշակերտների հետ նստեց յեղճերուներ լծաւ սահնակը, գնաց մոտիկ գյուղի դպրոցը՝ սովորելու:





## 12. ՓԻՍԻԿԻ ԳԱՆԳԱՏԸ

Փիսիկը նստել  
մի մութ անկյունում,  
ունքերը կիտել  
ու լաց ե լինում։  
Մոտիկ ե գալի  
մի ուրիշ կատու։  
— Ինչո՞ւ յես լալիս,  
այ փիսիկ ջան, դու...  
— Ի՞նչ անեմ հապա,  
վոր լաց չլինեմ,—  
գանգատ ե անում


փիսոն տիսրաղեմ, —  
են Համոն թագուն  
մածունը կերավ,  
գնաց տատի մոտ  
ինձ վրա դրավ։  
Հիմի տատիկի  
հետեից ընկած,  
ինձ են ման գալի  
մի-մի փետ առած,  
են քոթոթ Սուրենը,  
Անոն ու Մոսոն։  
— Ուր ե, — ասում են, —  
ուր ե գող փիսոն։  
Այս, թե մի գտա՞նք,  
մածուն ցույց կտանք...»  
Եսպես բան սարքեց  
են Համոն իմ դեմ,  
ի՞նչ անեմ հապա,  
վոր լաց չլինեմ...  
Ու փիսոն նստել  
մի մութ անկյունում,  
ունքերը կիտել  
ու լաց ե լինում։



### 13. ՄՈՒԿՆ ՈՒ ԱՌԱԵՅ

(Առակ)

— Լոել ես արդյոք,  
առնետ հարեան,  
սրանից եւ լավ,  
ու բախտի բան.  
առում են կատուն,  
չար ու մկնակեր,




հոկա առյուծի  
ճանկն ե ընկել.  
Այ թե քեֆ կանենք  
խոհանոյում մենք:  
— Մի ու բախտսնա,  
մկնիկ հարեան,  
ի՞նչ առյուծ, ի՞նչ բան,  
յեթե վոր գործը  
ճանկերի հասնի,  
կատվի թաթերից  
վոշ վոք չի պրծնի:

Առյուծը դժվար  
կենդանի մնա.  
փիսիկից ուժեղ  
կենդանի չկա:



### 14. ՍԱՎԱՋՆԱԿԸ

Բարձր, բարձր ամպի տակով,  
զույգ թերը լայն տարածած,  
հսկա, հպարտ ու անվրդով  
սավառնակն ե սահում ողում...




ՄԵՐ ՀԵՐՈՍ ՈԴԱՉՈՒՆԵՐԸ



ԶԿԱԼՈՎ

ԲԵԼՅԱԿՈՎ

ԲԱՅԴՈՒԿՈՎ



Ա. ՍԵԳԻՆ

Ե. ԿԱՄԱԼԻՆ

Հ. ԴԱՐՅՈՒՆ

ՄԵՐ ՀԵՐՈՍ ՈԴԱՉՈՒՆԵՐԸ



Ա. ԼՅԱՂԻԴԵՎՈՎ

Մ. ՎՈԴՈՎՅԱՆՈՎ

Վ. ՄՈԼԹՈՎ




ԶՐՈՍՅՈՎ

Ա. ԿԵՎԱՆԵՎՈՎ

## 15. ՔԱԶ ՏՂԱՆ

Մանուկների խումբն ուրախ-ուրախ դպրոց  
եր գնում:

Սռավոտյան ցուրտը կարմրեցրել եր նրանց  
թերք Փողոցում հնչում եր նըտնշ ուրախ ծիծ սղը:



-- Հապա, նզ ինձ կրոնի, -- ձայն տվեց Արշա-  
վորն ու սկսեց արագ վագեր:

— Յես, յես... ձայն տվին մյուսներն ու վա-  
ղեցին նրա հետեւից:

Հենց այդ միջոցին մոտիկ զարպասից դուրս  
վագեց մի մեծ շուն ու նետվեց զեպի վազող յե-  
րեխաները:

Յերեխաները փախան: Միայն փոքրիկ Հայկը  
կանգ առավ, մատը թափ տվեց և մեղմ ձայ-

նով ասաց. «Կուտիկ, կուտիկ, տես, ինձ չկծես,  
ինձ չկծես»:

Շունը կանգ առավ, պոչը թափահարեց, մո-  
տեցավ Հայկին ու քսմսվեց նրան:

Հայկը շոյեց շան զլուխն ու վիզը: Հետո  
պայուսակից մի կտոր հաց հանեց, զցեց շանը և  
վագեց վախկոտ ընկերների հետեւից, վորոնք փո-  
ղոցի մյուս ծայրին կանգնած՝ նայում եյին նը-  
րան:

## 16. Բարիկ

— Բարիկ, բարիկ, կարմիր թարիկ,  
ո՞ր ես գնում կամաց-կամաց,  
չագուկներդ չորս կողմից սուած:

— Եես գնում եմ զուր գյունելու,  
չագուկներս լիանալու,  
չագուկներս մախուր-մախուր,  
իսկ ծույլ գրղային են անմախուր



ԸՆԿԵՐ ՎՈՐՈՇԻԼՈՎ  
Խորհրդային Միության մարշալ, Կարմիր բանակի  
առաջնորդը

17. ԱՆԳԱԴՅԻ ԲԱԽԱԿԵ

Կարմիր բանակը  
անհաղթ բանակը,



մեր Խորհուրդների  
արթաւն պահակը,  
զգաստ և անքուն,  
գիշեր ու ցերեկ,  
զիտում ե, հսկում,  
վոր մեր թշնամին  
մոտ չգա յերբեք  
Խորհրդի յերկրին:

Ուռա, ուռա՝ մեր  
Կարմիր բանակին՝  
բանվոր, գյուղացու  
արթուն զավակին:

## 18. ՏԻՐԸ

1

Տիրը չինացի փոքրիկ տղա յեւ:  
Նա շատ աղքատ եւ Քնելու տեղ ել չունի,  
Ըստում և վորտեղ պատահի։  
Միանգամ սնազործ բանվոր Խամին ասաց Տիրին.  
— Դու կաթիլի չափ փոքր ես։ Յեթե կաթիլլ  
յերեկոյան փողոցներով անցնի, նրան կնկատե՞ն։  
— Չեն նկատի, — պատասխանեց Տիրը։  
— Դեն, կաթիլի պես վազիր գործարան և այս  
թուղթը փակցըրու պատին։

Խամին մի թուղթ տվեց Տիրին, վորի վրա  
շատ ու շատ սև նշաններ կային։

Տիրն այդ թուղթը տարավ ու փակցըրեց պա-  
տին։

2

Առավոտյան գործարանի բանվորները նայե-  
ցին սե-սև նշաններին ու բարձր գոչեցին։

— Մենք քաղցած ենք։ Հերիք ե ինչքան  
համբերեցինք։ Թող կորչեն հարուստները։

Հանկարծ վազելով յեկան ատղանակներով և  
իայտերով զինված մարդիկ։

Նրանք բանվորներին ծեծեցին։ Մի քանիսին  
ել ավտոմոբիլի մեջ զցեցին ու տարան։

3


Յերեկոյան Տիրը դնաց Խամու մոտ ու հար-  
ցըրեց։

— Քո սև նշաններն ասացին, թե հերիք ե,  
վորքան համբերեցինք։

Ռամին գլխով արավ։

— Խամի, — ասաց Տիրը, — սովորեցրու ինձ ել  
այդպիսի նշաններ աներ։ Յես ամեն գիշեր կփակ-  
ցընեմ պատերին, վոր ամենքն ել սովորեն գոչել։

— Հերիք ե ինչքան համբերեցինք։ Թող կոր-  
չեն հարուստները, շահագործողները։



## 19. ԱՎ ԱԼԱՐԻ, ՎՈՇ ԳԱԼԱՐԻ


1

Ժամանակով  
ազգով տակով,  
տնով, տեղով,  
ամբողջ ցեղով  
կատուներն են  
մկան վորսկան։  
Բայց ես կատուն,  
ես մեկն եսքան  
մըսկան, սսկան,

ճպռհտ, քնկհտ,  
ծույլ, այարկհտ:  
Չեմ բամբասում.  
Մուկ չի վորսում:

2

Դնչից հեռու չորս, հինգ մատ  
դրին թատով լիքը կաթ:  
Քիթը կաթի հոտն առավ,  
ասա ծույլը հետ դարձավ,  
վոր կաթիցը կում անի,  
անուշ, անուշ խում անի:  
Չե, արել գիտենա,  
նա ուզում ե  
թասն իր դնչին մոտենա:  
Սլարկոտը չգիտի  
չաշխատողը չի ուտի:  
Ով ալարի,  
վոչ դալարի:



## 20. ԳԱԶԱՆԱՆՈՅԻՄ

Մեր դասարանը ուսուցումի ընկեր Հասմիկի  
ղեկավարությամբ, գնաց գաղանանոց:  
Գաղանանոցը գոնվում եր բանվորական ա-  
կումբի բակում:  
Մուտքի առաջ շարպած եյին կենդանիների և  
թոշունների նկարներ:  
Ներս մտանք:  
Կենդանիները մանղակների մեջ եյին:  
Այնակա եյին՝ առյուծը, վագրը, բորենին, ջայ-  
լամբ, փիղը, գայլը, աղվեսը, մի քանի ահագին  
ոձեր, տեսակ-տեսակ կապիկներ և ուրիշ շատ կեն-  
դանիներ ու թոշուններ:  
Ընկեր Հասմիկը պատմում եր սեղ յուրաքանչյուր


կենդանու մասին, թե քանի տարեկան ե, վորտեղից ե բերված, ինչով ե կերակրվում:

Ինձ ամենից շատ գուը յեկազ կանաչ թերով թութակը, վոր նայում եր մեզ և շարունակ կը ըկնում.

Յերեխնք, յերեխնք,  
Շաքար տփեք, շաքար տփեք

## 21. Կապու

Կապուն յեկազ փիսիկ-փիսիկ,  
հապար նայով, ինչպես եարսիկ  
Դունչը սրբեց քարիկներով.  
Մայր սանրեց չանչիկներով.  
— Կապու, կապու, եր ես պրոռում,  
թէ մկներն են պար սրբուն.



## 22. ՅԵՐԿՈՒ ԽԱՓ

Միենույն յերկաթի կտորից և միենույն գործարանում շինված ելին յերկու խոփի:

Նրանցից մեկն խսկույն գնաց աշխատանքի խսկ մյուսը յերկար ժամանակ ընկած եր գործարանում:

Մի ժամանակ այդ յերկու խոփերը կրկէն պատահեցին իրար:


Աշխատող խոփն արծաթի պես փայլում եր, խսկ պարապ մնացածը՝ սեացել եր ու ժանգով պատեր

— Ասա, խնդրեմ. ինչի՞ցն ե, վոր դու այդպես փայլում ես, — հարցը ժանգուած խոփն իր ընկերոջը:

— Աշխատելուց, սիրելի ընկեր, — պատասխանեց փայլուն խոփը. խսկ յեթե զու ժանգուել ես և առաջգանից ավելի վատացել, այդ նրանից ե, վոր յերկար ժամանակ անզործ պառկած ես յեղել գործարանում:

### 23. ՄԿԱՆ ՏԱՒՆԸ

— Ո՞ւր ե, մուկիկ, քո բունը:  
 — Հա, հեռու չե իմ տունը.  
 կերթաս այսպես գու առաջ,  
 հետո քիչ ձախ, հետո աջ,  
 կելնես քիչ վեր,  
 կիշնես ցած,  
 այնտեղից ել  
 քիչ անցած՝  
 նորից քիչ ձախ, նորից աջ,  
 բունս կը գա քո առաջ։  
 Բայց դուռս ու շեմ,  
 պետք ե ասեմ,  
 սաստիկ փորր ե, դրացի,  
 ներս մտնելիս կուցի։



### 24. ԿԱՇԱՂԱԿՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

(Առակ)


Կաչաղակը կչկչալով  
 ճյուղից ճյուղ եր թոշկոտում,  
 իսկ ագռավը լուս, անվրդով  
 նստած, ականջ եր դնում։

— Ի՞նչ ես նստել ականջ դնում  
 լուս ու անխոս, սիրելիս։  
 Չէնի՞ թե չես հավատում  
 ասածներիս, պատմածիս։

— Զալիկ քույրիկ, յես չեմ ծածկում,  
 հավատալս չի գալիս։  
 ով վոր քեզ պես շատ ե խոսում,  
 շատ ստել ե զուրս տալիս։

25. ԾՉԱԿԻ ՅԵՐԳԸ

Հեռու ծայրից քաղաքի  
յերգն ե հնչում շշակի.  
«Պստիկ աղջիկ, վեր կաց, վեր,  
վաղուց արևն ե ծագել.  
հիմա արդեն դպրոցում  
վաղուց քեզ են սպասում»:



Հեռու ծայրից քաղաքի  
յերգն ե հնչում շշակի.  
«Մանուկներին եմ կանչում,  
մայրիկներին եմ կանչում,  
աշխատանքի յեմ կանչում»:

26. ԴԱԲԱՑՈՒՆԿ

Փոս ենք փորում,  
ծառ ենք տնկում  
ուրախ յերգով ու կանչով,  
վոր մեծանա  
ու ճյուղեր տա,  
ծածկվի սիրուն կանաչով:  
Վոր յերբ ամռան  
արևը գա  
իր շողերով շողշողուն,  
ծառը սիրով  
հանգիստ կտա  
մեզ իր անուշ ստվերում:

27. ԳԱՐՈՒՆ

Գարուն ե:  
Զյունը հալվում ե:  
Փոքրիկ տափակները զեպի զետն են վազում:  
Զյունի տակից դուրս ե յեկել ձնծաղիկը:  
Հենց ձյունը հալվում ե թե չե, հողի միջից  
ծլում են, բարձրանում խոտերն ու ծաղիկները  
թփերի մոտ, անտառի արևոտ կողմում բացվում  
են մանուշակները:  
Մեղուները փեթակներից դուրս են թռչում,  
ծաղիկների մեջ կեր վորոնում:

Գարնանը մեր կոլեկտիվ տնտեսության յեռուն աշխատանքներն են սկսվում:

Կոլխոզի փոչխարների հոտերը ստրն են տանում:

Հոտի առջևից գնում են այծերը:

Հոտը տանում ե հովիք Մացակը:

Գառների, ուղերի հոտն ել նշանց հետեից քշում են գառնարածները:

---

Մացակ պապը հոտը լավ ե պահում, վոչ մի կորուստ չի տալիս:


Անձրեից, քամոց, կարկտից չի վախենում — միշտ կարողանում ե հոտը հասցնել գոմերը, կամ այրերը:

Գայլերից ել չի վախենում Մացակ պապը:

Մահակը ձեռին, հրացանն ուսին, նա շրջապատված ե պահապան շներով, զայլ խեղղող գամփրոներով և պահպանում ե կոլխոզի հոտերը:

Վայ այն գայլին, վոր մոտենա Մացակ պապի հոտին. ել աղատվել չի կարող:

---



ՊԱՇԱ ԱՆԳԵԼԻՆԱ


Ստախանովական արակտորիստ




ԱՇՈՏ ՄԱՐԶԱՆՅԱՆ

Ստախանովական կոմբանավար


ԳՅՈՒՂԱՏՆՏԵԽԵՎԱՆ ՌԵՖԻՆԵՐԻ



ԱՐԱԿՏՈՐ



ԾԱՐՔԱՑԱՐ



ԾԱՐՔԱՑԱՐ

28. ՍԱՐՅԱԿԻ ՏՈՒՆԵՐԸ

Սարյակները մեր հերթան  
ես ուր վոր ե պիտի զան,  
բայց տնակը հնացած  
պետք չի զալու ել նրանց:



Կարեն, որի միասին  
նոր տուն շինենք սարյակին,  
թե չե՞ տեսնի տուն չկա,  
ել մեր բակին մոտ չի զա:

Պորդ ու թրթուր զանազան,  
յես ի՞նչ գիտեմ՝ ել ի՞նչ բան,  
ներս կմտնեն մեր այգին,  
մնաս կտան ահազին:



## 29. ՄԱՆՈՒՅԿ

Գապույտ գլխով, կանաչ վոտով  
յես ծաղիկ եմ անուշ հոտով:  
Թէև տունկա փոքրիկ ե, ցած,  
արոտներում միշտ թագ կացած,  
բայց իմ փունջը, իբրև լայ զարդ,  
տեսնում ե միշտ ամեն մի մարդ:  
Յես եմ սիրուն զարնան գուշակ,  
իմ անունն ե մանուշակ:

## 30. ԱՐԱԳԻԼ


Քարնանը տաք յերկըներից վերադարձան ա-  
րագիները:

Մեր տան մոտ յեղած բարձր բարդու վրա  
գտնվող բունը նորոգեցին ու ապրեցին:

Չու ածեց արագիլը, ձագեր հանեց:

Հայր ու մայր արագիները մեծ խնամքով  
կերակրում ու պահում են իրենց ձագերին:

Յնը մեկը կերի ե գնում, մյուսը մի վոտի  
վրա անշարժ կանգնած, պահպանում ե բունը:



## 31. ԱՆՁՈՒՆԻ ԱԼԻՏԻԿԵ

1

Քանամեկ որ թուխսը վեր չեր կենում ձվերի  
մրայից: Տասերկու բրդոտ ճաեր գուրս եյին յեկեր  
մնում եր միայն մի կանաչավուն ձու:

Հանկարծ թուխսը լսեց, վոր ձվի ներսից  
թխթիւկացնում են: Խսկույն կտցով ձուն ջարդեց  
ու միջից գուրս յեկավ ճուտիկը:

Սա նման չեր իր յեղբայրիկներին ու քոյ-

ՐԻԼՆԵՐԻՆ: Ավելի բրդոտ եր, ավելի դեպին, վոտիկ-  
ները կարճ-կարճ, զլուխը լայն, կտուցը տափակ:  
«Ի՞նչ անձոռնի յե», — մտածեց մայրը:

2

Համն իր ճուտիկներին համաքեց և հպարտ-  
հպարտ, կրթկրթալով գնաց բակը: Բոլորն արագ-  
արագ վազվազում եյին, միայն վերջը դուրս յեկած  
ճուտիկը քայլում եր ծանր և որորվելով:

Մայրը ճուտիկներին տարավ տովի ափը  
քջուջ անելու:

Անձոռնի ճուտիկը ջուրը տեսավ թե չե, մեջն  
ընկավ:


Մայրը սաստիկ ճշում եր, թերը թափ տա-  
լիս, դեպի ջուրը նետվում: Ճուտիկները ճվճվում  
եյին, դես ու դեն ընկնում:

Իսկ անձոռնի ճուտիկը հանգիստ լող եր տա-  
լիս ջրի յերեսին:

Պառավ նանը, լսելով բակի աղմուկը, դուրս  
վազեց՝ տեսնի, թե ինչ ե պատահել:

Լողացող ճուտիկին տեսնելով, նա գոչեց.

— Վայ, այս ի՞նչ եմ արել, հավի տակ բաղի  
Ճու յեմ դըել:



### 32. ՎՈԶՆԻՆ ՈՒ ՆԱՊԱՏԱԿԸ

— Ի՞նչ տպեղ ու ծակծկող շորեր ունես, բա-  
րեկամ, — ասաց նապաստակը վողնուն:

— Ճիշտ ե, — պատասխանեց վողնին, — բայց իս  
փշերն ինձ ազատում են շների ու գայլերի ատամ-  
ներից: Քո մորթին ել քեզ ազատում ե:

— Վնչ, ինձ ազատում են իմ արագավագ  
վոտները, — պատասխանեց նապաստակը:

### 33. ՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՁԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Մեր կողանտեսության դաշտերի և անտառի  
մեջ սյուներ ենք տնկել և այդ սյուների վրա  
փակցրել տախտակներ ու վրան գրել.

«Վոզնին կերակրվում ե մկներով, խխունջնե-  
րով և վորդերով։ Չապանեք վոզնիներին»։

«Խլուրդը միշտ զանազան զատասակար միջատ-  
ներով, վորդերով ու թրթուրներով ե կերակր-  
վում։ Չապանեք խլուրդներին»։

«Թրթուրները մեծ միաս են հասցնում բույ-  
սերին։ Թուչունները չափազանց մեծ քանակու-  
թյամբ թրթուրներ են վոչնչացնում։ Մանուկներ,  
ձվեր և ճագեր չհանեք թուչունների բներից։ Չա-  
փերեք նրանց բները, վոչնչացրեք միասատու մի-  
ջատներին»։

### 34. ՄԱՅԻՍ

Այ ու ա. գան գառ մայիս,  
գու ամենիդ լավ ամիս,  
կյանք ու արև ես տալիս.  
ի՞նչ սիրուն ես, չան մայիս

Հանդ ու այգի գարզարուն,  
հովս ե խաղում զաշտերում,  
թոչուններն են քեզ գովում.  
ի՞նչ նաշխուն ես, լավ մայիս

Դու կայտառ ես մանկան պես,  
թոփուն ու խնդերես։



Մայիսի 1-ի տոնը Խորհրդային Միության մեջ

35. ՄԵՂՈՒՆԵՐԸ

1

Դարձունը յեկավ։ Որը տաք եր, արևը վառ։  
Մեղուները փեթակից դուրս յեկան, թուան  
խնձորենու մոտ։

— ՄԲԹԵ խնձորենին մեղուներիս համար  
գոչինչ չունի



Վհշ, մեղուները շուտ են դուրս յեկել. դեռ  
խնձորենու ծաղիկները թագնված են բողբոջների  
մեջ։

2

Մեղուները թուան դեպի բաւենին։  
— ՄԲԹԵ բալենին ծաղիկներ չունի մեղու-  
ների համար։

— ՄԻ քանի որից հետո յեկեք, դեռ վհչ մի  
ծաղիկ չի բացվել։

Մեղուները թուան կակաչի մոտ։ Մտան նրա  
գունավոր բաժակը, բայց այնտեղ ուտելիք չկար։

3

Մեղուները սոված, տիտոր ուզում եյին հետ  
դառնալ փեթակը, յերբ հանկարծ թփի տակ տեշ  
սան փոքրիկ, մուգ-կապույտ ծաղիկներ։

Դրանք մանուշակներն եյին։

Մեղուները նրանց բաժակներից կուշտ կերան,  
խմեցին և ուրախ-ուրախ վերադարձան փեթակը

36 ՄԵՂՈՒՆԵՐԸ

Այզան, պազան, պապան,  
փոքրիկ մեղու բազան.  
Դաշտ ու հովիտ կյրզես,  
բարձր սարեր կթռչես  
և վորներով թափամակ  
փոշի առած դուն կգաս։

37. ՀԱՆԵԼՈՒԿ

Վոչ ցորեն եմ, վոչ գարի,  
վոր հողագործն ինձ ցանի:  
Առանց ջրի հունցած եմ,  
առանց ձեռքի կոլորած,  
յես ան՛ըրակ թխած եմ,  
թռնիր, ջաղաց տեսած չեմ,  
ձեր ամենիդ սիրածն եմ:

38. ՊԵՊԻ ՈՒ ԸԱՂԳԵՄԸ



Դուան առաջ մի անգամ  
պապը ցանեց մի շաղգամ:  
Շաղգամն աճեց, մեծ ոցավ:  
Պապը քաշեց, քաշքեց,  
շաղգամը հողից չհանեց:



Պապը կանչեց տատիկին: Տատիկը պապիկից,  
պապիկը շաղգամից,  
հա քաշեցին, քաշքեցին,  
շաղգամը հողից չհանեցին:  
Տատիկը կանչեց թռոնիկին:



Թռոնիկը տատիկից, տատիկը պապիկից,  
պապիկը շաղգամից  
հա քաշեցին, քաշքեցին,  
շաղգամը հողից չհանեցին:



Թոռնիկը կանչեց շնիկին. Շնիկը թոռնիկից,  
թոռնիկը տատիկից, տատիկը պապիկից,  
պապիկը շաղգամից

հա քաշեցին, քաշըշեցին,  
շաղգամը հողից չհանեցին:  
Շնիկը կանչեց կատվիկին. Կատվիկը շնի-  
կից, շնիկը թոռնիկից, թոռնիկը տատի-  
կից, տատիկը պապիկից, պապիկը շաղգամից



հա քաշեցին, քաշըշեցին,  
շաղգամը հողից չհանեցին:




Կատվիկը կանչեց մկնիկին. Մկնիկը կատ-  
վիկից, կատվիկը շնիկից, շնիկը թոռնի-  
կից, թոռնիկը տատիկից, տատիկը պապի-  
կից, պապիկը շաղգամից:




Քաշեցին, քաշըշեցին,  
շաղգամը հողից հանեցին.



39. ՏԱՐՎԱ ԱՄԻՍՆԵՐԸ



Մարտը տալիս ե ձնծաղիկ,  
ապրիլը կապույտ մանուշակ,  
մայիսին բացվում ե վարդը,  
սուսակը յերգում անուշակ:




Հունիսը մեզ խոտ ե տափս,  
խկ հուլիսն առատ ցորեն,  
ոգոստոսը տանձ ու խնձոր,  
և ուրիշ շատ հասուն մրգեր:



Օեպոեմբերը մեզ տալիս ե  
խաղողի բոլոր տեսակը,  
հոկտեմբերը կարմիր զինի,  
նոյեմբերը բողկն ու տակը:

Դեկտեմբերին ձյուն ե գալիս,  
հունվարին ծածկում սար ու ձոր,  
փետրվարին սկսվում ե  
վորխոխակի ցուրտ ու տաք որ:



Այսպես ահա բոլոր տարին  
թափալվում ե չորս շրջանում,  
այդ պատճառով չորս յեղանակ,  
չորս ժամանակ ե մեզ բերում:

**ՀԱՆԵԼՈՒԹ.** Չորս յեղբայր են, ամեն տարի յերկրի վրա  
ման են գալիս:



## 40 Յաներ

Ջնամին ե ամենին,  
թե զյուղի, թե խողաչի:  
Աղյուն ու կեղյուր վորոներին  
պարածում ե քույն ու մահ:  
Այդ աներես եաներին  
կորորեցեմ անինա:

## 41. ԳԱՅԻՍՏՆԵՐԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

1

Իսպանացի Վիտորիոն կովում եր Փաշխտների գեմ: Իսկ նրա կինը, 8 տարեկան վորդին՝ Մարտինը և 5 տարեկան աղջիկը՝ Լառւրդեին, գտնվում եյին Նավալմորալ քաղաքում:

Շուտով այդ քաղաքը Փաշխտները վերցրին: Քսանութ որ շորունակ Վիտորիոյի ընտանիքը թագնվում ե Փաշխտներից տանիքների տակ

և նկուղներում։ Հաճախ հաց և ջուր չեն ունենում։ Ամեն ըստ սպասում են, վոր Փաշիստներն իրենց կբռնեն ու կառնջեն։

2

Մի գիշեր վոքրիկ Մարտինը մոտենում է մոռը, ծոցից մի մեծ ատրճանակ ե հանում և ասում։ — Տես, մայրից, յես ատրճանակ ունեմ։ Այժմ կարող եմ բոլոր թշնամիներին սպանել։ Վազենք, գնանք հայրիկին գտնենք։

Մայրիկը յերկար ժամանակ չեր համաձայն-վում, յերեխաների կյանքը վտանգի յենթարկել չեր ուզում։

Սակայն վերջը նա վորդու խնդիրը կատարեց։ Նրանք փողոց դուրս յեկան։ Փողոցը մութն եր ու սարսափելի։

Դեռ մի քանի քայլ չարած, մեկը ձայն տվեց։ Կանգնիր։ Ո՞վ ե գալիս։

Մարտինն իրեն չկորցրեց։ Նա իր քույրիկի ձեռքից բռնեց, մի կողմ տարավ ու թագնվեցին փողոցի անկյունում։

Մայրիկը թագնվել չկարողացավ։ Զինված Փաշիստները մոտեցան և շրջապատեցին նրան։

Լառը դեխին շատ վախեցավ ու լաց յեղափ։ — Լաց մի լինի, — ասաց Մարտինը։ — Գնանք հայրիկին գտնենք, հետո կզանք մայրիկի հետեւից։

Տների ավերակներում, փողոցների անկյուններում թագնվելով, յերեխաները հասան քաղաքի ծայրը։

Մի քանի անգամ պահակները նրանց կանգնեցրին, բայց Մարտինը նրանց կարողացավ խարեւ։

— Մենք գնում ենք հայրիկի մոտ։ Նա այս քաղաքը պաշտպանում է թշնամիներից։

Փողոցներից մեկում յերեխաները խոտութեռնված մի սայլ տեսան։

— Մտիր խոտի տակ, — հրամայեց Մարտինն իւրույնիկին։

Յերեխաները մտան խոտի տակ և քաղաքի։ գուրս յեկան։

Այստեղ յերեխաները, գնդակների տարափի տակ, պետք ե անցնեյին։

Փոսերում, ձորերում, անտառներում թագնրվելով, նրանք մի քանի որից հետո հասան հանրապետական զորամասերին։ Յերեխաները գտան իրենց հայրիկին և սկասմեցին ինչ վոր պատահել եր։

— Հայրիկ, գոչեց Մարտինը։ — Հրացանդ տուր, վոր գնանք մայրիկին ազատենք։

42. ՈՒԼԻԿԸ


(Հեքիաթ)

1

Խոր անտառում մի այծ եր լինում: Ունենում  
ե մի գեղեցիկ ուր:


Ուլին ամեն որ թողնում ետանը, ինքը գնում  
ե արոտ անելու: Արածում եռ իրիկունը կուրծքը  
լիքը տուն ե զալի: Տուն ե զալի, դուռը զարկում  
ու մկկում, կանչում.

Սեռկ ուլիկ,  
սիրուն բալիկ,



ման եմ յեկել սարե սար,  
կաթն եմ արել քեզ համար  
Դոնակը բաց, ներս գամ յես,  
անուշ-անուշ ծիծ տամ քեզը  
Սեռկ ուլիկ,  
սիրուն բալիկ:


Ուլիկն խկույն վեր ե թոչում, դուռը բաց  
անում: Մայրը ծիծ ե տալիս նրան ու կրկին  
գնում արոտ:



2

Ես բոլորը թագուն տեսնում ե գայլը Մի իրի-  
կուն այծից առաջ զալիս ե, դուռը զարկում ու էր  
հաստ ձայնով կանչում.

Սեռւկ ուլիկ,  
 սիրուն բալիկ,  
 ման եմ յեկել սարե սար,  
 կաթն եմ արել քեզ համառ  
 Դոնակը բաց, ներս գամ յես,  
 անուշ-անուշ ծիծ տամ քեզ:  
 Սեռւկ ուլիկ,  
 սիրուն բալիկ:



Ուլիկը լսում ե, լսում ու պատասխանում.  
 «Եղ ով ես զու, չեմ ճանաչում: Իմ մայրն եղան  
 չի կանչում: Նա բաղյը ու բարակ ձայն ունի: Քո

ձայնը կոշտ ե ու կոպիտ: Դուռը բայ չէմ անհ...  
 Գնա... Զեմ ուղում քեզ...  
 Ու գայլը հեռանում ե, զնում:

3

Գալիս ե մայրը, զուոր ծեծում.

Սեռւկ ուլիկ,  
 սիրուն բալիկ,

ման եմ յեկել սարե սար,  
 կաթն եմ արել քեզ համար  
 Դոնակը բաց, ներս գամ յես,  
 անուշ-անուշ ծիծ տամ քեզ:

Սեռւկ ուլիկ,  
 սիրուն բալիկ:

Ուլիկը դուռը բաց ե անում, ծիծ ե ուտում  
 ու մորր պատմում:

— Գիտես, մայրիկ, ինչ յեղափ: Մի քիչ առաջ  
 մինը յեկափ, դուռը զարկեց ու կանչում եր.

Սեռւկ ուլիկ,  
 սիրուն բալիկ:

Ասում եր՝ դուռը բաց արաւ Ենպես հաստ ձայն  
 ուներ: Ենպես վախեցա, ենպես վախեցա... Դուռը  
 բաց չարի, ասի՛ չեմ ուղում, գնա...

— Պա, պա, պա, պա, սեռւկ ջան, ինչ լափ ե  
 յեղել, վոր բաց չես արել, — ասափ վախեցած մայ-  
 րու: Եղ գայլն ե յեղել: յեկել ե, վոր քեզ ուտաի:  
 Մյուս անգամ ել վոր զա, բաց չանես. ասա՝ գնա,  
 թե չե իմ մայրը քեզ կսպանի իր սուր պողերով:

### 43. ՊՈՉԱՏ ԿԱՇԱՂԱԿԸ


(Հեքիաթ)

1

Լինում ե, չի լինում, մի պառակ տատիկ ե լինում:

Տատիկը մի այծ ե ունենում: Նա ամեն որ այծը կթում, թոռնիկներին կերակում եր:

Մի որ ել կաթը դրեց ծառի տակը, ինքը գնաց փայտ բերելու, վոր կերակուր պատրաստի:




Այս բանը կաշաղակը տեսավ: Նա թռավ, կանգնեց ամանի վրա ու կաթը թափեց: Պառակը բարկացավ, ձեռքի փայտով խփեց կաշաղակին, պոչը կտրեց:

2

Կաշաղակը թռավ, կանգնեց ծառին ու ասաց:  
— Տոտիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ կցմցեմ,  
պոչս սաղացնեմ, գնամ ընկերներիս հասնեմ, վոր  
չասեն՝ պոչատ-մոչատ կաշաղակը յեկավ:

Պառակն ասաց:

— Գնա, կաթս բեր, պոշտ տամ:  
կաշաղակը թռավ, գնաց կովի մոտ և ասաց:  
— Կովիկ, կովիկ, կաթ տուր, կաթը տանեմ պա-



ռավին տամ, պառակն իմ պոչս տա, կցեմ կըց-  
մըցեմ, պոչս սաղացնեմ, գնամ ընկերներիս հաս-  
նեմ, վոր չասեն՝ պոչատ-մոչատ կաշաղակը յե-  
կավ:

Կովին ասաց:

— Գնա, ինձ համար խոտ բեր, քեզ կաթ տամ:

3


Կաշաղակը թռավ, գնաց արտի մոտ և ասաց:  
— Արտ, արտ, ինձ խոտ տուր, խոտը տանեմ  
կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը տանեմ

պառափին տամ, պառափը պոչս տա, կցեմ, կցմցեմ,  
պոչս սաղացնեմ, գնամ բնկերներիս հասնեմ, վոր  
շասեն՝ պոչատ-մոշատ կաչաղակը յեկավ:

Արտն ասաց.

— Գնա, ինձ համար ջուր բեր,  
Կաչաղակը թռավ, գնաց ջրբաշխի մոտ և ա-  
սաց.

— Ջըբա՛շխ, Ջըբա՛շխ, ինձ ջուր տուր, ջուրը  
տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տա, խոտը



տա՞նեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը  
տանեմ պառափին տամ, պառափը պոչս տա, կցեմ  
կցմցեմ, պոչս սաղացնեմ, գնամ բնկերիս հաս-

նեմ, վոր շասեն՝ պոչատ-մոշատ կաչաղակը յեկավ:


Ջըբաշխն ասաց.

— Գնա, ինձ համար բահ բեր:

4

Կաչաղակը թռավ, գնաց դարբնէ մոտ և ա-  
սաց.

— Դարբին, դարբին, ինձ բահ տուր, բահը  
տանեմ ջրբաշխին, ջրբաշխն ինձ ջուր տա, ջուրը  
տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տա, խոտը  
տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը  
տանեմ պառափին տամ, պառափը պոչս տա, կցեմ  
կցմցեմ, պոչս սաղացնեմ, գնամ բնկերներիս հաս-  
նեմ, վոր շասեն՝ պոչատ-մոշատ կաչաղակը յեկավ:



Դարբինն ասաց.

— Գնա՛, ինձ համար ձու բեր:

Կաչաղակը թռավ, գնաց հափի մոտ և ասաց.

— Հափիկ, հափիկ, ինձ ձու տուր, ձուն տա-  
նեմ դարբնին տամ, դարբինն ինձ բահ տա, բահը  
տանեմ ջրբաշխին, ջրբաշխն ինձ ջուր տա, ջուրը

տանեմ արտին տամ, արտն ինձ խոռ տա, խոռը  
տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տա, կաթը  
տանեմ պառափին տամ, պառափը պոչս տա, կցեմ  
կցմցեմ, պոչս սաղացնեմ, գնամ ընկերներիս հաս-  
նեմ, վոր չասեն՝ պոչատմոչատ կաշաղակը յե-  
կավ:

Հավը խղճաց նրան մի ձու տվեց:

Կաշաղակը շատ ուրախացավ: Չուն տարագ  
դարբնին, դարբնինը նրան բա՞ տվեց, բա՞ր տա-  
րագ ջրբաշխին, ջրբաշխը նրան ջուր տվեց, ջուրը  
տարագ արտին, արտը նրան խոռ տվեց, խոռը  
տարագ կովին տվեց, կովը նրան կաթ տվեց, կա-  
թը տարագ պառափին, պառափը նրա պոչը տվեց,  
կցեց կցմցեց, պոչը սաղացրեց, գնաց ընկերներին  
հասավ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Զմեւ—թարգմ.	9
2 Մաքուր ողում — Հ. Հայրապետյան	9
3 Ջյունի տակ — թարգմ.	11
4 Պետիկի վերջակետը — (ձեռագիր)	12
5 Լենինի հետ — թարգմ.	13
6 Ընկեր Ստալինի պատանեկությունը — Պ. Քափա- նաձեւ	14
7 Ընկեր Ստալինը և Մամլաքյաթը — թարգմ.	15
8 Մեր քաղաքները (նկարներ)	16
9 Անզրկովկաս — Հ. Հայրապետյան	21
10 Վուկի ձկնիկ — Ա. Ա. Պուշկին, թարգմ.	23
11 Աղայանի պատճենը — Ա. Աղայանի	27
12 Փիռներ Պետիկը — Հ. Հայրապետյան	29
13 Մուկն ու առնետը (առակ) — Կովով	30
14 Սալառնակը Հ. Հայրապետյան	32
15 Ողաչուներ (նկար)	33
16 Քաջ տղան *	34
17 Անհաղթ բանակը — Հ. Հայրապետյան	36
18 Տիբը — Սերեկ Դավթյան	37
19 Ով ալարի, վաչ գալարի — Խնկո-Ապեր	41
20 Գաղանանոցում — Հ. Հայրապետյան	42
21 Կատու (ձեռագիր)	43
22 Ցերկու խոփ — թարգմ.	45
	46
	47

23 Մկան տունը — Հովհաննես Թումանյան	48
24 Կաշաղակին ու ագռավը — Հ. Հայրապետյան	49
25 Եշակի յերզը — Հ. Հայրապետյան	50
26 Ծառատունկ — Հ. Հայրապետյան	51
27 Գարուն — թարգմ.	51
Սոտախանովականներ (նկար)	53
Գյուղատնտեսական մեքենաներ (նկար)	54
28 Սարյակի տունը — Հ. Հայրապետյան	55
29 Մանուշակ —	56
30 Արագիլ —	56
31 Անձոռնի ճուտիկը — Անդրսեն	57
32 Վոզնին ու նապաստակը — Լ. Տևառյան	59
33 Պահպանեցեք ձեր բարեկամներն թարգմ.	60
34 Մայս — Հ. Հայրապետյան	60
Մայիսի 1-ի տոնը Խորհրդային Միության մեջ (նկար)	61
35 Մեղուները — թարգմ	62
36 Մեղու — (ձեռագիր)	63
37 Հանելուկ — Ժողովրդական (մաղր)	64
38 Պապն ու շաղդամը (հեքիաթ) թարգմ.	64
39 Տարվա ամիսները — Դ. Աղալյան	68
40 Ճանձը — (ձեռագիր)	71
41 Ֆաշիստների ճանկերում — թարգմ. Հ. Հայրապետյան	71
42 Ուլիկը — Հովհաննես (հեքիաթ)	74
43 Պոչատ կաշաղակը — (հեքիաթ)	78



Պատ. Խմբագիր՝ Ս. Դավիթյան  
Նկարներ՝ Ա. Ղարիբյանի և Մ. Բաղդասարյանի  
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան  
Սրբաւորէ՝ Ա. Արգարածյան

Հանձնված է արտադրության 26 հունիսի, 1986 թ.  
Ստորագրված է տպագրելու 23 հունվարի, 1987 թ.  
Թղթի չափը 82 ս/մ տիրած 60,000  
5,4 տպագրական մամուլ մեկ տպ. մամուլում 29000  
Հրատարակ. 3775, պատվեր 1006 գլուխ. լիազոր Գ-4075

Գետերատի տպարան, Ցերման Անդրանիկի, 4

ՀՀ Ազգային գրադարան



ԳԻԱԸ 1 Ր. 15 Կ.

95

8462



Լ. ԽՈԴՅԱՆ և Ա. ԱԻՐԱՊԵՏՅԱՆ  
Կնիք ձալ չթենի  
ձալ I կլասս

Գն Արմ. ССР, Еревան, 1937 թ.